

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

**ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ - 200**

«Հայ դպրություն» հասարակական կազմակերպության հովանավորությամբ լույս է տեսել «Խաչատուր Աբովյան - 200» հոդվածների հատընտիր ժողովածուն:

2005 թ. հոկտեմբերին Խ. Աբովյանի տուն-թանգարանում կազմակերպվեց գիտական նստաշրջան, որին իրենց մասնակցությունը բերեցին Երևանի պետական և Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանների արվեստագետ դասախոսները, թանգարանի աշխատակիցները:

Նստաշրջանը նվիրված էր մեծ լուսավորչի ծննդյան 200-ամյակին: Ելույթ ունեցողները, կարևորելով նստաշրջանը, նշեցին, որ այն մի նոր քայլ է լինելու մեծ գրողի, լուսավորչի, մանկավարժի, հասարակական-քաղաքական գործչի ծննդյան թվականի հետ կապված տարակարծությունները հարթելու ուղղությամբ: Եվ, իրոք, գիտական զեկույցների ճնշող մեծամասնության մտահոգությունը հենց այդ խնդիրն էր, հանիրավի, երբեմն նաև մտացածին բարդությունների ստեղծումը, որոնց պատճառով էլ առ այսօր վիճելի է մնում Խ. Աբովյանի ծննդյան թվականի հարցը: Այս ուղղությամբ իր պրպտումների արդյունքները ներկայացրեց թանգարանի տնօրեն Հովհ. Զատիկյանը՝ հրապարակելով վաղուց հայտնի, բայց ինչ-ինչ պատճառներով ուշադրությունից դուրս թողնված այն փաստաթուղթը, որի հեղինակը Խ. Աբովյանն է: Մեծ հայրենասերը իր ընկերներից մեկին գրած նամակում հայտնում է, որ ինքը ծնվել է 1805 թ., Երևանից 7 վերստ հեռավորության վրա գտնվող Քանաքեռ գյուղում: Փաստաթուղթը դիտելով որպես ինքնակենսագրություն, զեկուցողն այն միտքն արտահայտեց, որ այսուհետ, առանց տարակուսանքների, Խ. Աբովյանի ծննդյան թվականը պետք է համարել 1805-ը:

Արձարձված մտքին համահունչ էր ԵՊՄՀ դասախոս, պ.գ.թ. Վ. Ավետյանի զեկուցումը: Նա իր «Խ. Աբովյանի ծննդյան թվականի հարցը» զեկուցման մեջ հանգամանորեն անդրադարձավ խնդրին և հույս հայտնեց, որ, ի վերջո, պարզություն կմտցվի մեծ մտածողի ծննդյան թվականի հարցում:

Բանասիրական գիտությունների դոկտոր Շ. Գրիգորյանի «Որտեղի՞ց էին գաղթել և ովքե՞ր էին Խ. Աբովյանի նախնիները» զեկուցումը եկավ լրացնելու քննարկվող հարցի շուրջ հայտնված կարծիքները:

Ներկայացված և մյուս զեկույցներից հետո կարևոր համարվեց հրատարակել մի ժողովածու՝ այստեղ ընդգրկելով ինչպես վերը նշված զեկուցումները, այնպես էլ Խ. Աբովյանի ծննդյան թվականը պարզաբանող անցյալի հետազոտողներ Գ. Աբովի և Ե. Շահազիզի ուսումնասիրությունները:

Ժողովածուի մեջ ընդգրկվեցին նաև բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Դոլուխանյանի, Յ. Միմոնյանի, Բ. Եսաջանյանի, Ա. Երզնկյանի, Խ. Սարգսյանի, Վ. Պողոսյանի, Ա. Հակոբջանյանի զեկուցումները, որոնք նվիրված էին Խ. Աբովյանի

մանկավարժական, աշխարհագրագիտական, բանասիրական, բանահյուսական հայացքների բացահայտմանը:

Հետաքրքրական էին ԵՊՀ դասախոս, բ.գ.թ. Ռ. Նահապետյանի «Խ. Աբովյանը որպես ազգագրագետ», ԵՊՄՀ դասախոս բ.գ.թ. Լ. Հովսեփյանի «Խ. Աբովյանի և Յոհան Հերդերի բանագիտական հայացքները» հոդվածները:

Բ.գ.դ. Կ. Չաչանիի «Խ. Աբովյանը քրդագետ» հոդվածը հանգամանալից անդրադարձ է մեծ մարդասերի, ժողովուրդների բարեկամության ջատագովի այդ բնագավառի ուսումնասիրություններին:

Ժողովածուում ընդգրկված են նաև «Խ. Աբովյանը հայ և օտար նշանավոր գործիչների գնահատմամբ», առանձնակի արժեք ներկայացնող «Խ. Աբովյանի կյանքի տարեգրությունը» բաժինները, որոնք ավարտուն պատկերացում են տալիս մեծ մտածողի կյանքի և ստեղծագործության մասին:

Ժողովածուն ավարտվում է Խ. Աբովյանին նվիրված հայ և օտարալեզու հեղինակների բանաստեղծություններով:

Ժողովածուի առաջաբանը գրել է գլխավոր խմբագիր Հովհ. Զատիկյանը:

Ժողովածուին առանձնակի արժեք է հաղորդում Խ. Աբովյանի «Պատկերներ դեպի Արարատ կատարած ճանապարհորդությունից» քչերին հայտնի բանաստեղծությունը, որը վերստին հավաստում է, որ Խ. Աբովյանը 19-րդ դարի առաջին կեսի հայ իրականության ամենախոշոր մտածողն էր, գրողը, բանաստեղծը, լուսավորիչը, մանկավարժը, բանահավաքը:

*ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՏԻԿՅԱՆ*